10
ՀՈԿՏԵՄԲԵՐ
2023

Luys Լույս®

ԱԼՄԱ ԱԹԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ԱԼՄԱ ԱԹԱՅԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Վարդան Պողոսյան
միջազգայնագետ, քաղաքագետ (M.A., Bonn)

Փաշինյանի և Ալիևի հետ Բրյուսելում ս. թ. մայիսի 14-ի եռակողմ հանդիպումից հետո Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարեց, որ Ադրբեջանի և Հայաստանի «ղեկավարները հաստատել են իրենց միանշանակ հավատարմությունը 1991թ. Ալմա Աթայի հռչակագրին և Հայաստանի (29,800 կմ²) և Ադրբեջանի (86,600 կմ²) համապատասխան տարածքային ամբողջականությանը»[1]: Միշելի այդ հայտարարությունը վերջնականապես բացահայտեց այն հիմնական նպատակը, որը հետապնդում էր Նիկոլ Փաշինյանը 2022-ից սկսած, երբ նա սկսեց հղումներ կատարել 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի հռչակագրին. հրաժարում Արցախի նկատմամբ Հայաստանի հանձնառություններից և Արցախի ճանաչում Ադրբեջանի կազմում: Գիտակցելով, թե դրա ուղղակի հայտարարությունը ինչ հետևանքներ կարող է ունենալ իր համար, Փաշինյանը այդ նպատակը երկար ժամանակ թաքցրած էր պահում և քայլ առ քայլ նախապատրաստում հանրությանը այն գաղափարին, որ Հայաստանը փրկելու համար անհրաժեշտ է զոհաբերել Արցախը: Իր հիմնական նպատակին հասնելու միջոցը Փաշինյանը ընտրել է Ալմա Աթայի հռչակագիրը, որպեսզի ցույց տա, որ Հայաստանը դեռևս 1991թ. իբր Արցախը ճանաչել է Ադրբեջանի մաս, ուստի ինքը չէ, որ հանձնում է Արցախը, և Արցախի հանձնման մեղավորները նախկին իշխանություններն են: Սույն հետազոտությունում վերլուծության է ենթարկվում է այն հարցը, թե արդյո՞ք ԱՊՀ ստեղծման վերաբերյալ փաստաթղթերը, ներառյալ 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի հռչակագիրը, միջազգային իրավունքի տեսանկյունից կարող են դիտվել որպես Հայաստանի համաձայնություն առ այն, որ Արցախը

[1] https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/05/14/press-remarks-by-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/:

Ադրբեջանական Հանրապետության տարածք է: Այդ նպատակով ստորև ցույց է տրվում, որ.

I. Ալմա Աթայի հռչակագիրը, որպես այդպիսին, Հայաստանի վրա որևէ միջազգային իրավական պարտականություն չի դրել Ադրբեջանի նկատմամբ, քանի որ Ադրբեջանը մինչև 1993թ. սեպտեմբերի 24-ը ԱՊՀ անդամ պետություն չի եղել (տե՛ս I., 3.,Գ):

II. ԱՊՀ ստեղծելու մասին 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագրում և Ալմա Աթայի 1991թ. դեկտեմբերի 21-ի հռչակագրում ամրագրված տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության հարգման դրույթը որևէ առնչություն չունի այն հարցի հետ, թե որոնք են ԱՊՀ անդամ պետությունների միջև գործող սահմանները, և թե ինչ տարածք է ընդգրկում այս կամ այն պետությունը: ԱՊՀ անդամ պետությունները միմյանց սահմանները ճանաչել են միայն 1993թ. հունվարի 22-ին ընդունված ԱՊՀ Կանոնադրությամբ, որի կողմ չի եղել Ադրբեջանական Հանրապետությունը (տե՛ս II.):

III. Հայաստանը ԱՊՀ ստեղծման համաձայնագիրը 1992թ. փետրվարի 18-ին վավերացրել է վերապահումներով, ընդ որում վերապահումներ կատարելու մտադրության վերաբերյալ Հայաստանը պաշտոնապես հայտարարել է դեռևս 1991թ. դեկտեմբերի 26-ին, երբ ՀՀ Գերագույն խորհուրդը վավերացրեց ԱՊՀ ստեղծման համաձայնագրի արձանագրությունը: ԱՊՀ ստեղծման համաձայնագրի վավերացման մասին ՀՀ ԳԽ 1992թ. փետրվարի 18-ի որոշման 10-րդ կետից աներկբայորեն հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը համարել է անկախ պետություն, որը պետք է իրավունք ունենա անդամակցելու ԱՊՀ-ին: ՀՀ Գերագույն խորհրդի այդ որոշումից հետո ևս Հայաստանի Հանրապետությունը երբևէ Արցախը չի ճանաչել Ադրբեջանի կազմում, ինչն ամրագրվել է ՀՀ ԳԽ 1992թ. հուլիսի 8-ի որոշմամբ և հաստատագրվել է 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրությամբ (տե՛ս III.):

I. ԱՊՀ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

1. ԽՍՀՄ փլուզումը և ԱՊՀ հիմնադրումը

ԱՊՀ հիմնադրումը ԽՍՀՄ փլուզման արդյունքն էր: Խորհրդային Միության փլուզման վերջին փուլը սկսվեց 1991-ի օգոստոսյան հեղաշրջման փորձի ձախողումից հետո[2], որը հանգեցրեց ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչևի իշխանության անկմանը և միութենական գրեթե բոլոր հանրապետությունների կողմից միակողմանի անկախություն հռչակելուն[3]: Պուտչի ձախողումից անմիջապես հետո Ռուսաստանը, թեև ինքը դեռ միութենական հանրապետություն էր, իրեն պահեց անկախ պետության նման՝ 1991 թվականի օգոստոսի 24-ին ուղղակիորեն ճանաչելով Էստոնիայի և Լատվիայի անկախությունը: 1991 թվականի սեպտեմբերի 6-ին ԽՍՀՄ նորաստեղծ Պետական խորհուրդը, որը կազմված էր ԽՍՀՄ նախագահից և տասներկու միութենական հանրապետությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանցից, ճանաչեց մերձբալթյան բոլոր երեք հանրապետությունների անկախությունը:

Թեև պուտչից հետո շարունակվեց այսպես կոչված օգարևյան գործընթացը, սակայն, ակնհայտ էր, որ այն ավելի շուտ արհեստական բնույթ ուներ[4], և աշխատանքները, ըստ էության, ընթանում էին կոնֆեդերատիվ կառուցվածք ունեցող միության շուրջ: 1991թ. նոյեմբերի 14-ին յոթ միութենական հանրապետության (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան) ղեկավարները և ԽՍՀՄ նախագահ Գորբաչովը հայտարարություն արեցին Ինքնիշխան պետությունների միության ստեղծման մասին համաձայնագիր

---

[2] 1991թ. օգոստոսի 20-ին նախատեսված էր նոր միութենական պայմանագրի կնքումը, որի մասնակից պետք է լիներ նաև ԽՍՀՄ ամենամեծ հանրապետությունը՝ ՌՍՖՍՀ-ը: ՌՍՖՍՀ նախագահ Բ. Ելցինը 1991թ. դեկտեմբերի 30-ի իր հեռուստատեսային ելույթում նշել է, որ «օգոստոսի 20-ին դեռ իրական հնարավորություն կար՝ ստորագրելու միութենական պայմանագիրը: Պուտչը դրան մահացու հարված հասցրեց»: Российская газета, 31.12.1991:

[3] Օգոստոսյան պուտչից հետո առաջինն իր պետական անկախությունը հռչակեց Ուկրաինան (օգոստոսի 24), այնուհետև՝ Բելառուսը (օգոստոսի 25), Մոլդովան (օգոստոսի 27), Ադրբեջանը (օգոստոսի 30), Ղրղզստանը (օգոստոսի 31), Ուզբեկստանը (օգոստոսի 31), Տաջիկստանը (սեպտեմբերի 9): Բոլոր այս հանրապետություններում անկախությունը հռչակվեց խորհրդարանի կողմից՝ առանց հանրաքվեի: 1991թ. հոկտեմբերի 26-ին անկախության հանրաքվե անցկացվեց Թուրքմենստանում: 1991թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեն Հայաստանում առանձնանում էր նրանով, որ այն կատարվել էր ԽՍՀՄ 1991թ. ապրիլի 3-ի օրենքով սահմանված հանրաքվե անցկացնելու պայմաններին խստիվ համապատասխան:

[4] Станкевич З.А. История крушения СССР: Политико-правовые аспекты М.: Изд-во МГУ, 2001, էջ 290:

կնքելու մտադրության մասին: Այդ համաձայնագրի նախագիծը 1991թ. նոյեմբերի 25-ին Նովո-Օգարևոյում կայացած Պետական խորհրդի նիստը լրամշակեց և առանց նախաստորագրման փոխանցեց հանրապետությունների խորհրդարաններին և Միութենական խորհրդին[5]: Նախաստորագրումից հրաժարվելու հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Ուկրաինան մինչև իր 1991թ. դեկտեմբերի 1-ին նախատեսված անկախության հանրաքվեի անցկացումը հրաժարվել էր մասնակցել նոր միության ստեղծման աշխատանքներին: Քանի որ յոթ հանրապետությունների նախագահները համատեղ հայտարարել էին, որ իրենք չեն կարող պատկերացնել միություն առանց Ուկրաինայի[6], նրանք սպասում էին Ուկրաինայի անկախության հանրաքվեի արդյունքներին:

1991 թվականի դեկտեմբերի 1-ի ուկրաինական հանրաքվեում 1991 թվականի օգոստոսի 24-ին Ուկրաինայի խորհրդարանի կողմից հռչակված «Ուկրաինայի անկախությունը և անկախ ուկրաինական պետության ստեղծումը» հաստատվեց ճնշող մեծամասնությամբ՝ գրեթե 90%: 1991թ. դեկտեմբերի 5-ին Ուկրաինայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց ԽՍՀՄ ստեղծման մասին 1922 թվականի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին[7]: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը հանրաքվեից հետո անմիջապես ճանաչեց Ուկրաինայի անկախությունը: Ընդգծելով, որ «նոր հնարավորություններ են բացվում այլ հանրապետությունների հետ սերտ համագործակցության համար», նա հանդես եկավ «ինքնիշխան պետությունների իսկապես իրավահավասար ընկերակցության ձևավորման» օգտին[8]: Իր հերթին, Ուկրաինայի նախագահ Կրավչուկը Ուկրաինայի նախագահական ընտրությունների քարոզարշավում հանդես էր գալիս հանրապետությունների միջև հորիզոնական կապերի հաստատման և առանց որևէ վերպետական իշխանությունների, առանց նախագահի, առանց խորհրդարանի, առանց նախարարությունների ընկերակցության օգտին[9]: Այդ ընկերակցությունը ստեղծվեց 1991թ. դեկտեմբերի 8-ին՝ Բելառուսի Բելովեժյան թավուտում գտնվող Վիսկուլի բնակավայրում: Համաձայնագրի կնքման պաշտոնական վայր, սակայն, համարվում է Մինսկը: ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարների նույն օրվա հայտարարության մեջ նրանք հիմնավորել են իրենց քայլը՝ ի թիվս այլոց մատնանշելով, որ «միության նոր պայմանագրի նախապատրաստման շուրջ

[5] Известия, 26.11.1991, Правда, 27.11.1991:
[6] Ուկրաինային ուղղված կոչը հրապարակվել է Российская газета թերթում, 23.10.1991:
[7] Ведомости Верховного Совета Украины, 1992, N 8, с. 199: Российская газета, 6.12.1991:
[8] https://yeltsin.ru/day-by-day/1991/12/04/#issue738: Ռուս.՝ «содружество»: 1991թ. հայերեն պաշտոնական հրապարակումներում օգտագործվում էր «ընկերակցություն» եզրույթը:
[9] Известия, 3.12.1991:

բանակցությունները մտել էին փակուղի» և որ «ռեալ գործոն էր դարձել հանրապետությունների՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու և անկախ պետությունների ձևավորման օբյեկտիվ գործընթացը»[10]:

2. 1991թ. դեկտեմբերի 8-ի «Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին» համաձայնագիրը

«Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին» համաձայնագիրը[11] ազդարարում էր Անկախ պետությունների համագործակցության ստեղծումը (ԱՊՀ): Այդ համաձայնագիրը բաղկացած է նախաբանից և 14 հոդվածներից: Նախաբանում Բելառուսի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՍԴԽՀ), Ուկրաինան «որպես 1922 թվականի Միութենական պայմանագիրը ստորագրած ԽՍՀ Միության հիմնադիր պետություններ» փաստում են, որ «ԽՍՀ Միությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը»: Հիմնվելով իրենց ժողովուրդների պատմական ընդհանրության և դրանց միջև գոյացած կապերի վրա՝ համաձայնագրի անդամ պետությունները հայտնում էին իրենց հարաբերությունները զարգացնելու մտադրությունը «պետական ինքնիշխանության, ինքնորոշման անբաժանելի իրավունքի, իրավահավասարության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների փոխադարձ ճանաչման և հարգման, ուժի գործադրումից, տնտեսական կամ ճնշման ցանկացած այլ մեթոդներից հրաժարվելու, վիճելի հիմնախնդիրները համաձայնեցված միջոցներով կարգավորելու, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի և սկզբունքների հիման վրա»: Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը «ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը և համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը: Նրանք երաշխավորում են սահմանների բաց լինելը, քաղաքացիների տեղաշարժման ազատությունը և տեղեկության փոխանցումը համագործակցության շրջանակներում»: Համաձայնագրի 7-րդ հոդվածը թվարկում է քաղաքականության այն ոլորտները, որոնք Համագործակցության ընդհանուր համակարգող ինստիտուտների միջոցով վերաբերում են «իրավահավասար հիմքով իրականացվող նրանց համատեղ գործունեության ոլորտին»: Համաձայն 10-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում

[10] http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3447:
[11] Ստորագրվել է 08.12.1991 թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77029:

կասեցնել պայմանագրի կամ դրա առանձին հոդվածների գործողությունը՝ այդ մասին մեկ տարի առաջ ծանուցելով համաձայնագրի մյուս մասնակիցներին:

3. ԱՊՀ կազմի ընդլայնումը 1991թ. դեկտեմբերի 21-ին

Մինսկի համաձայնագրի արձանագրումը, որ «ԽՍՀ Միությունը... դադարեցնում է իր գոյությունը», դեռևս չէր նշանակում, որ ԽՍՀՄ-ը դադարել է գոյություն ունենալուց և վրա է հասել ԽՍՀՄ-ի իրավաբանական մահը[12]: 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագիրը վճռորոշ քաղաքական հարված հասցրեց ԽՍՀՄ գոյությանը, սակայն այն իրավաբանորեն դեռ չվերացրեց: Խորհրդային Միության մաս կազմող երեք, թեկուզ խոշոր, հանրապետությունները իրավունք չունեին միայնակ որոշելու այդ երկրի ճակատագիրը: Հատկանշական է, որ ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման արձանագրումը համաձայնագրի տեքստը կատարում էր միայն իր ներածական, այլ ոչ թե օպերատիվ մասում, և այն չէր կարող հասկացվել որպես ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու վերաբերյալ եռակողմ համաձայնագիր: Երբ ՌՍՖՍՀ Գերագույն խորհուրդը 1991թ. դեկտեմբերի 12-ին վավերացրեց ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը, նույն օրը ռուսական խորհրդարանը մեկ այլ՝ առանձին որոշմամբ չեղյալ հայտարարեց 1922թ. միութենական պայմանագիրը[13]:

Բացառությամբ Ղազախստանի, մյուս բոլոր միութենական հանրապետությունները հռչակել էին իրենց անկախությունը դեռևս մինչև Մինսկի համաձայնագիրը: 1991 թվականի դեկտեմբերի 13-ին Աշխաբադումտեղի ունեցած՝ Ղազախստանի և Միջին Ասիայի չորս հանրապետությունների նախագահների հանդիպման ժամանակ այդ երկրները համաձայնեցին միանալ ԱՊՀ-ին, սակայն պայմանով, որպեսզի ապահովվի «նախկին Միության սուբյեկտների հավասար մասնակցությունը Անկախ պետությունների համագործակցության վերաբերյալ որոշումների և փաստաթղթերի մշակման գործընթացում», իսկ համագործակցությունը կազմող բոլոր պետությունները ճանաչվեն «որպես հիմնադիր և համաձայնագրի տեքստում նշվեն որպես բարձր պայմանավորվող կողմեր»[14]: Այդ

---

[12] Ս. Շախրայը, որը համաձայնագրի հիմնական հեղինակներից մեկն էր ռուսական կողմից, այդ համաձայնագիրը բնութագրել է որպես ԽՍՀՄ մահվան վկայական: Шахрай С.М. Как я написал Конституцию эпохи Ельцина и Путина М.: Изд-во Синдбад, 2021, էջ 113 (էլեկտր.):

[13] Постановление Верховного Совета РСФСР от 12 декабря 1991 года «О денонсации Договора об образовании СССР» // Ведомости СНД РСФСР и ВС РСФСР. — 1991. — № 51. — ст. 1799. https://ru.wikisource.org/wiki/%D0%9F%D0%BE%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%92%D0%A1_%D0%A0%D0%A1%D0%A4%D0%A1%D0%A0_%D0%BE%D1%82_12.12.1991_%E2%84%96_2015-I:

[14] Казахстанская правда, 13.12.1991: Հղումը ըստ https://web.archive.org/web/20111101063539/http://www.law.edu.ru/doc/document.asp?docID=1126873#_ftn2:

հանդիպումը 11 միութենական հանրապետությունների մասնակցությամբ տեղի ունեցավ 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում:

Ա. Ալմա Աթայի արձանագրությունը

1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ընդունված կարևորագույն փաստաթուղթը 1991 թվականի դեկտեմբերի 8-ին՝ Մինսկում, Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության (ՌՍԴԽՀ), Ուկրաինայի կողմից ստորագրված համաձայնագրին կից արձանագրությունն[15] էր, որով ԱՊՀ անդամ պետությունների կազմը ընդլայնվեց՝ ներառելով նախկին 15 միութենական հանրապետություններից 11-ին: Այդ փաստաթուղթը ստորագրել են Ադրբեջանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՍԴԽՀ), Տաջիկստանի Հանրապետությունը, Թուրքմենստանը, Ուզբեկստանի Հանրապետությունը և Ուկրաինան: Արձանագրության առաջին պարբերությունը սահմանում է, որ նշված պետությունները «իրավահավասարության հիմքերով և որպես Բարձր պայմանավորվող կողմեր՝ ստեղծում են Անկախ պետությունների համագործակցություն»: Ըստ Արձանագրության 4-րդ պարբերության՝ այն «հանդիսանում է Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի բաղկացուցիչ մասը»: Նման իրավաբանական տեխնիկայի միջոցով Ալմա Աթայում ոչ սլավոնական 8 հանրապետությունները ոչ թե միանում էին 1991թ. դեկտեմբերի 8-ի ԱՊՀ հիմնադիր համաձայնագրին՝ վերջինիս 13-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, այլ դառնում էին ԱՊՀ (համա)հիմնադիր պետություններ:

Արձանագրության 2-րդ և 3-րդ պարբերությունները վերաբերում են ԱՊՀ ստեղծելու մասին 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագրի վավերացմանը և դրա իրավական հետևանքներին: Արձանագրության 2-րդ պարբերության համաձայն՝ «Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի կողմից այն վավերացնելու պահից»: Կարևոր է նկատել, որ խոսքն այստեղ ոչ թե Ալմա Աթայի արձանագրության, այլ Մինսկի համաձայնագրի վավերացման մասին է: Այդ վավերացումն անհրաժեշտ էր, որպեսզի ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը ուժի մեջ մտնի տվյալ պետության համար: Քանի որ Ալմա Աթայի արձանագրությունը

[15] https://www.irtek.am/views/act.aspx?aid=43898:

վերաբերում էր միայն ԱՊՀ կազմի ընդլայնմանը և որևէ կերպ չէր անդրադառնում ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրի բովանդակային դրույթներին, այդ փաստաթղթի 3-րդ պարբերությունը սահմանում էր, որ «համաձայնագրի վավերացման ժամանակ կատարված վերապահումները հաշվի առնելով՝ կմշակվեն Համագործակցության շրջանակներում համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթեր»: Քանի որ սլավոնական երեք հանրապետություններն արդեն իսկ վավերացրել էին Մինսկի համաձայնագիրը, ապա նման ձևով ոչ սլավոնական 8 հանրապետությունների համար հնարավորություն էր ստեղծվում վավերացման ժամանակ կատարելու իրենց վերապահումները Մինսկի համաձայնագրի վերաբերյալ:

Ալմա Աթայի արձանագրությունը չէր պարունակում առանձին դրույթ հենց իր՝ արձանագրության վավերացման վերաբերյալ: Բնական է, որ այն կարող էր նշանակություն ունենալ միայն ոչ սլավոնական 8 հանրապետությունների համար, քանի որ արձանագրությունը որևէ հավելյալ պարտականություններ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի համար չէր պարունակում: Վավերացման պրակտիկան ընթացավ տարբեր ճանապարհներով: Եթե Ղազախստանը (1991թ. դեկտեմբերի 23), Թուրքմենստանը (1991թ. դեկտեմբերի 26) և Մոլդովան (1994թ. ապրիլի 8) վավերացրին միայն Մինսկի համաձայնագիրը, իսկ Ղրղզստանը՝ միայն Արձանագրությունը (1992թ. մարտի 6), ապա Ուզբեկստանը (1992թ. հունվարի 4) և Տաջիկստանը (1991թ. դեկտեմբերի 25, 1992թ. հունիսի 26) վավերացրին ինչպես Մինսկի համաձայնագիրը, այնպես էլ Ալմա Աթայի արձանագրությունը[16]:

Հայաստանի Հանրապետությունը ևս նախընտրեց գնալ վերջին ճանապարհով, ինչը պայմանավորված էր նաև Արցախի Հանրապետության 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեից հետո ստեղծված իրավիճակով: 1991թ. դեկտեմբերի 26-ին Գերագույն խորհուրդը առանց վերապահումների վավերացրեց «1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի ստորագրած Անկախ պետությունների ընկերակցության ստեղծման համաձայնագրի արձանագրությունը՝ ստորագրված 1991 թվականի դեկտեմբերի 21-ին, Ալմա Աթայում, և նույն որոշման 2-րդ կետով հանձնարարեց

16 https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D0%B4%D1%80%D1%83%D0%B6%D0%B5%D1%81%D1%82%D0%B2%D0%BE_%D0%9D%D0%B5%D0%B7%D0%B0%D0%B2%D0%B8%D1%81%D0%B8%D0%BC%D1%8B%D1%85_%D0%93%D0%BE%D1%81%D1%83%D0%B4%D0%B0%D1%80%D1%81%D1%82%D0%B2:

«Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի, անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի մշտական և Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովներին՝ մշակել և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հաստատմանը ներկայացնել Անկախ պետությունների ընկերակցության ստեղծման համաձայնագրի վերապահումների վերաբերյալ առաջարկություններ»[17]: Այսպիսով, 1991թ. դեկտեմբերի 26-ից Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտավ ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը:

Այդ նույն օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանրապետությունների խորհրդի[18] կողմից ընդունված որոշմամբ[19] արձանագրվեց նախկին խորհրդային պետությունների անկախության ճանաչումը և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը:

Բ. Ալմա Աթայի հռչակագիրը

1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայի արձանագրությունը ստորագրած 11 պետությունների ղեկավարները ընդունեցին նաև Ալմա Աթայի հռչակագիրը[20], որտեղ համագործակցության մասնակից պետությունները, հավաստելով իրենց հավատարմությունը ԱՊՀ նպատակներին և սկզբունքներին, հայտարարում էին ապագա համագործակցության կազմակերպման հետ կապված իրենց պարտավորությունների մասին (ԱՊՀ շրջանակներում փոխգործակցության կարգը, միջուկային զենքի նկատմամբ միասնական հսկողությունը և ռազմաստրատեգիական ուժերի միացյալ հրամանատարությունը, ընդհանուր տնտեսական տարածության, համաեվրոպական և եվրասիական շուկաների ձևավորման ու զարգացման համագործակցությունը): Հռչակագիրը փաստում էր, որ «Անկախ պետությունների

[17] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1991, հ. 24 (1004), 31.12.1991, հ. 573, էջ 37. ՀՀ Գերագույն խորհրդի որոշում «Անկախ պետությունների ընկերակցության ստեղծման համաձայնագրի արձանագրությունը վավերացնելու մասին», N Ն-0495-I, 1991թ. դեկտեմբերի 26, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3227:

[18] Закон СССР от 05.09.1991 № 2392-1 «Об органах государственной власти и управления Союза ССР в переходный период»:

[19] Декларация Совета Республик ВС СССР от 26 декабря, 1991 № 142-Н, https://ru.wikisource.org/wiki/%D0%94%D0%B5%D0%BA%D0%BB%D0%B0%D1%80%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F_%D0%A1%D0%BE%D0%B2%D0%B5%D1%82%D0%B0_%D0%A0%D0%B5%D1%81%D0%BF%D1%83%D0%B1%D0%BB%D0%B8%D0%BA_%D0%92%D0%A1_%D0%A1%D0%A1%D0%A1%D0%A0_%D0%BE%D1%82_26.12.1991_%E2%84%96_142-%D0%9D:

[20] Ստորագրվել է 21.12.1991 թ., ՀՀ ԱԳՆ ՊՏ 2004.12.20/3(11), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77470:

համագործակցության ստեղծմամբ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դադարեցնում է իր գոյությունը»: Համագործակցության մասնակից պետությունները երաշխավորում էին «նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից և համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը»:

Հռչակագրի նախաբանում սահմանվում էր, որ համագործակցության մասնակից պետությունների միջև հարաբերությունները կզարգանան «ինքնորոշման անքակտելի իրավունքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու և իրավահավասարության սկզբունքների ուժի գործադրումից և ուժով սպառնալիքից, տնտեսական և ճնշման ցանկացած այլ մեթոդից հրաժարվելու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, ներառյալ ազգային փոքրամասնությունների իրավունքները, միջազգային իրավունքի նորմերի ու հանրաճանաչ այլ սկզբունքների ու պարտավորությունների բարեխիղճ կատարման հիման վրա, ճանաչելով և հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը»:

Հռչակագրի նախաբանում արտացոլված բոլոր վերոհիշյալ սկզբունքները միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմեր են, և դրանց ամրագրմամբ ԱՊՀ անդամ պետությունները արտահայտում էին իրենց ձգտումը՝ որպես նորանկախ պետություններ ենթարկվել միջազգային իրավունքի նորմերին: Հատկանշական է, որ այս սկզբունքները արտացոլված են հռչակագրի նախաբանում, այլ ոչ թե օպերատիվ մասում, որտեղ սահմանվում էին ԱՊՀ պետությունների կոնկրետ պարտավորությունները: ԱՊՀ հիմնադրման փուլում անդամ պետությունները իրենց առջև խնդիր չեն դնում լուծելու միմյանց միջև տարածքային վեճերը և սահմանների խնդիրները, այլ բավարարվում են շատ ընդհանուր դրույթներով, որոնց իմաստը վեճերի խաղաղ կարգավորումն է[21]:

Գ. Ադրբեջանի անդամակցությունը ԱՊՀ-ին

Ինչպես արդեն նշվեց, Ադրբեջանը 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ստորագրեց ինչպես Ալմա Աթայի արձանագրությունը, այնպես էլ հռչակագիրը: Հարկ է նկատել, սակայն, որ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը, ստորագրելով այդ

[21] Ինչպես նշում է բելգիացի հետազոտող Վեերթսը, ԽՍՀՄ «վարչական սահմաններն այս փուլում որևէ առանձնահատուկ կարգավիճակ չունեն, և պետությունները խուսափում են հայտարարություններ անել այս կետի վերաբերյալ»: Laurence Weerts, “Heurs et malheurs du principe de l’uti possidetis: le cas du démembrement de l'U.R.S.S.”, in Corten, Olivier (Ed.), et al. Démembrements d'Etats et délimitations territoriales l'uti possidetis en question(s), էջ 107:

փաստաթղթերը, ուղղակիորեն խախտում էր ադրբեջանական խորհրդարանի նախօրեին կայացրած որոշումը, ըստ որի Ադրբեջանի միացումը ԱՊՀ-ին նպատակահարմար չէր համարվել[22]: Ադրբեջանի խորհրդարանը, որն այդ որոշումն ընդունել էր բուռն քննարկումներից հետո[23], նույն որոշման երկրորդ կետով պահանջում էր սահմանել Ադրբեջանի տարածքում տեղակայված Խորհրդային Միության զինված ուժերի ստորաբաժանումների կարգավիճակը՝ համաձայն ԱՀ անկախության մասին սահմանադրական ակտի և այլ ադրբեջանական ակտերի, և առաջարկում էր Ա. Մութալիբովին բանակցել Անկախ պետությունների համագործակցության հետ՝ Ադրբեջանի տարածքից խորհրդային զորքերի դուրսբերման շուրջ: Որպեսզի Ա. Մութալիբովի կողմից ստորագրված փաստաթղթերը իրավական ուժ ձեռք բերեին Ադրբեջանի համար, անհրաժեշտ էր, որ կա՛մ Ալմա Աթայի արձանագրությունը, կա՛մ ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը վավերացվեր Ադրբեջանի խորհրդարանի կողմից: Սակայն Ադրբեջանի խորհրդարանը 1992թ. հոկտեմբերի 7-ին ուղղակիորեն մերժեց ԱՊՀ համաձայնագրի վավերացումը[24]:

Ադրբեջանը իր դիրքորոշումը ԱՊՀ նկատմամբ փոխեց միայն Հ. Ալիևի կողմից 1993թ. իշխանությունը նվաճելուց հետո: 1993թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի խորհրդարանն ընդունեց «Անկախ պետությունների համագործակցությանը Ադրբեջանի Հանրապետության միանալու մասին» որոշումը[25]: Այդ որոշմամբ Ադրբեջանի Հանրապետությունը միանում էր ինչպես Անկախ պետությունների համագործակցությանը, այնպես էլ ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը: Որոշման 3-րդ կետով Ադրբեջանի նախագահին առաջարկվում էր իրականացնել այդ որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումները: Ի կատարումն այդ որոշման՝ մի քանի օր անց, 1993թ. սեպտեմբերի 24-ին, Հ. Ալիևը Մոսկվայում ստորագրեց 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության (ՌՍԴԽՀ) և Ուկրաինայի կողմից ստորագրված

[22] Azərbaycan Respublikası Ali Soveti Milli Şurasının Müstəqil Dövlətlər Birliyinə münasibəti haqqında Azərbaycan Respublikası Ali Soveti Milli Şurasının qərarı. 20.12.1991. https://e-qanun.az/framework/6802:

[23] Qasımlı M.C. Azərbaycan Respublikasının tarixi (1991-2021): 2 cilddə. I cild (1991-2003). Bakı: Bakı Dövlət Universiteti, 2021, էջ 102:

[24] Müstəqil Dövlətlər Birliyi haqqında Saziş barədə Azərbaycan Respublikası Milli Məclisinin Qərarı. 7.10.1992. http://www.e-qanun.az/framework/7797:

[25] Azərbaycan Respublikasının Müstəqil Dövlətlər Birliyinə qoşulması haqqında Azərbaycan Respublikası Milli Məclisinin Qərarı. 20.09.1993. http://www.meclis.gov.az/?/az/topcontent/60:

համաձայնագրին կից արձանագրությունը[26] և Ալմա Աթայի հռչակագիրը[27]: Նույն օրը ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարները, ողջունելով Ադրբեջանի խորհրդարանի որոշումը՝ ԱՊՀ մտնելու մասին, որոշեցին համաձայնություն տալ Ադրբեջանի այդ որոշմանը[28]: Ադրբեջանի անդամակցությունը ԱՊՀ-ին իրականացվեց ԱՊՀ Կանոնադրության 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ըստ որի՝ «Համագործակցության անդամ կարող է դառնալ նաև այն պետությունը, որը կիսում է Համագործակցության նպատակներն ու սկզբունքները և ստանձնում է սույն Կանոնադրությունից բխող պարտավորությունները, բոլոր անդամ պետությունների համաձայնությամբ՝ Կանոնադրությանը միանալու միջոցով»: Այն հանգամանքը, որ Ադրբեջանը ԱՊՀ անդամ է դարձել ոչ որպես հիմնադիր պետություն, ինչպես դա սահմանված է ԱՊՀ Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում[29], հաստատված է նաև ԱՊՀ Տնտեսական դատարանի 1994թ. մարտի 31-ի հ. 02/94 որոշմամբ[30]:

Հատկանշական է, որ ինչպես Ադրբեջանի խորհրդարանի, այնպես էլ Հ. Ալիևի կողմից ստորագրված վերևում հիշատակված ակտերում խոսքը ոչ թե Մութալիբովի ստորագրության հաստատման կամ խորհրդարանի 1992թ. հոկտեմբերի 7-ի որոշման վերացման մասին է, այլ Ադրբեջանի կողմից նոր ստորագրության մասին: Ալմա Աթայի հռչակագրին միանալու վերաբերյալ Հ. Ալիևի կողմից ստորագրված փաստաթուղթը ունի հետևյալ բովանդակությունը. «Սույնով հաստատվում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը ստորագրում է Ալմա Աթայի հռչակագիրը, որը կնքվել է Անկախ պետությունների համագործակցության Պետությունների ղեկավարների խորհրդի նիստում, 1991թ. դեկտեմբերի 21-ին, Ալմա Աթայում»[31]: Այսպիսով, Ադրբեջանը, չնայած այն հանգամանքին, որ Ա. Մութալիբովը 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ստորագրել էր ԱՊՀ համաձայնագրին կից

[26] http://cis.minsk.by/reestrv2/doc/6#text:
[27] https://cis.minsk.by/site/about-cis. Алма-Атинская Декларация (21 декабря 1991 года):
[28] https://cis.minsk.by/reestrv2/doc/256#text:
[29] ԱՊՀ Կանոնադրության 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Համագործակցության անդամ պետություններ հանդիսանում են այն հիմնադիր պետությունները, որոնք ստանձնում են սույն Կանոնադրությունից բխող պարտավորությունները՝ Պետությունների ղեկավարների խորհրդի կողմից այն ընդունվելուց մեկ տարվա ընթացքում»: Ադրբեջանը չէր կարող լինել հիմնադիր անդամ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, մինչև ԱՊՀ Կանոնադրության ընդունումը (1993թ. հունվարի 22) չէր վավերացրել ո՛չ դեկտեմբերի 8-ի համաձայնագիրը և ո՛չ էլ դրա արձանագրությունը:
[30] Решение Экономического Суда СНГ от 31.03.1994 N 02/94 "О толковании по запросу о применении положений Соглашений и других актов Содружества". http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_4131/:
[31] https://cis.minsk.by/site/about-cis. Алма-Атинская Декларация (21 декабря 1991 года):

արձանագրությունը, ԱՊՀ անդամ պետության կարգավիճակ է ձեռք բերել միայն 1993թ. սեպտեմբերի 24-ին: Ըստ այդմ, մինչև 1993թ. սեպտեմբերի 24-ը Ադրբեջանի մասնակցությամբ ԱՊՀ որևէ փաստաթուղթ չէր կարող ԱՊՀ անդամ այլ պետությունների համար առաջացնել իրավունքներ կամ պարտականություններ: Ուստի, 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի հռչակագիրը, որը ԱՊՀ անդամ պետությունների միջև ստորագրված փաստաթուղթ է, առնվազն մինչև 1993թ. սեպտեմբերի 24-ը Հայաստանի Հանրապետության վրա որևէ միջազգային-իրավական պարտավորություն չէր կարող դնել ԱՊՀ անդամ պետություն չհանդիսացող Ադրբեջանի նկատմամբ: Ավելին, ինչպես ցույց կտրվի ստորև, նույնիսկ այն պարագայում, եթե Ադրբեջանը ԱՊՀ անդամ հանդիսանար համագործակցության ստեղծման պահից, միևնույն է, հռչակագիրը որևէ կերպ չի կարող փաստարկ հանդիսանալ հօգուտ այն թեզի, թե Հայաստանը Ալմա Աթայի հռչակագրով իբր ճանաչել է Արցախի պատկանելությունը Ադրբեջանի Հանրապետությանը:

II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՆԽԱԽՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԳՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

Ինչպես նշվեց վերևում, ԱՊՀ ստեղծելու մասին 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագրի 5-րդ հոդվածում և Ալմա Աթայի հռչակագրի նախաբանում, իրարից թեթևակիորեն տարբերվող ձևակերպումներով ամրագրվեց, որ ԱՊՀ մասնակից պետությունները ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը և գոյություն ունեցող[32] սահմանների անխախտելիությունը[33]: Վկայակոչելով տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության ճանաչման և հարգման դրույթները՝ Հայաստանի ներկայիս կառավարությունը պնդում է, թե իբր դեռևս 1991թ. դեկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունը Արցախը ճանաչել է որպես Ադրբեջանի տարածք: Իրականում ո՛չ տարածքային ամբողջականության և ո՛չ էլ սահմանների անխախտելիության ճանաչման և հարգման վերաբերյալ դրույթները որևէ առնչություն չունեն այն հարցի հետ, թե որոնք են ԱՊՀ անդամ պետությունների միջև գործող սահմանները, և թե ինչ տարածք է ընդգրկում այս կամ այն պետությունը: Ճանաչելով միմյանց տարածքային ամբողջականությունը և սահմանների անխախտելիությունը՝ Ալմա Աթայի

[32] Մինսկի համաձայնագրում՝ «համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող...»:
[33] Ռուս.՝ «нерушимость»: Մինսկի համաձայնագրում՝ «անձեռնմխելիությունը», ռուս.՝ «неприкосновенность»:

հռչակագիրը որևէ դրույթ չի պարունակում ԱՊՀ պետությունների միջև *սահմանների ճանաչման* մասին: ԱՊՀ անդամ պետությունները միմյանց սահմանները ճանաչել են միայն 1993թ. հունվարի 22-ին ընդունված ԱՊՀ Կանոնադրությամբ, որին կողմ այդ Կանոնադրության ընդունման պահին Ադրբեջանի Հանրապետությունը չի եղել:

1. Տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության հարգման դրույթները միջազգային իրավունքում

Տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավունքի կարևոր սկզբունքներից մեկն է և ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ, մասնավորապես՝ 2-րդ հոդվածի 4-րդ կետում, որը սահմանում է, որ Միավորված ազգերի կազմակերպության «բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի սպառնալիքից կամ դրա կիրառումից»: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1970թ. հոկտեմբերի 24-ին ընդունած Խաղաղ հարաբերությունների հռչակագրում (Friendly Relations Declaration, որն ըստ ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի՝ «արտացոլում է միջազգային սովորութային իրավունքը»[34]) թվարկվում են այն տարբեր պարտավորությունները, որոնք դրված են պետությունների վրա՝ զերծ մնալու այլ ինքնիշխան պետությունների տարածքային ամբողջականությունը խախտելուց: 1975 թվականի օգոստոսի 1-ի՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության Հելսինկյան կոնֆերանսի եզրափակիչ ակտը սահմանում է, որ «մասնակից պետությունները հարգում են մասնակից պետություններից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությունը» (հոդված IV): Հղելով բոլոր այս միջազգային-իրավական փաստաթղթերին՝ ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանը Կոսովոյի վերաբերյալ իր խորհրդատվական կարծիքում եկել է այն կարևոր եզրահանգմանը, որ «տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակը սահմանափակվում է պետությունների միջև հարաբերությունների ոլորտով»[35]:

---

[34] ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի որոշումներ. Case Concerning the Military and Paramilitary Activities in and Against Nicaragua“ (Nicaragua v. United States of America, 27.6.1986), ICJ-Reports 1986, էջ 14, կետ 176, Islamic Republic of Iran v. United States of America, 6.11.2003, ICJ-Reports 2003, էջ 161, կետ 51:

[35] Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo Advisory Opinion of 22 July 2010, Para. 80. https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf.

Այսպիսով, տարածքային ամբողջականության հարգման սկզբունքը ներառում է պետությունների միջև ինչպես ուժի կիրառման կամ սպառնալիքի արգելքը, այնպես էլ ընդհանրապես որևէ պետության կողմից այնպիսի գործողությունները, որոնցով միջամտություն է իրականացվում մեկ այլ պետության տարածքային ինքնիշխանության նկատմամբ՝ առանց վերջինիս համաձայնության կամ որևէ այլ միջազգային-իրավական տիտղոսի[36]: Տարածքային ամբողջականությունը հարգելու պահանջը վերաբերում է բոլոր օտարերկրյա պետությունների ինքնիշխան ակտերին, որոնք խաթարում են մեկ այլ պետության տարածքային ինքնիշխանությունը[37]:

Տարածքային ամբողջականության սկզբունքի այս անվիճելի ընկալումը վկայում է, որ այն չի վերաբերում այս կամ այն տարածքի կոնկրետ տարածքային պատկանելության խնդրին, այլ բացառում է վիճահարույց տարածքների պատճառով ուժի գործադրումը:

Ալմա Աթայի հռչակագրում արտացոլված սահմանների անձեռնմխելիության հարգման դրույթը ևս ունի հստակ և միանշանակ բովանդակություն և իր էությամբ տարածքային ամբողջականության սկզբունքի կարևոր տարրերից մեկն է: Սահմանների անձեռնմխելիության սկզբունքը վերաբերում է պետությունների միջև գոյություն ունեցող իրավական կամ փաստացի սահմանների նկատմամբ ոտնձգության արգելքին: Սահմանների վիճելիության պայմաններում այն արգելում է սահմանակից պետություններին սահմանային վեճերը լուծել ուժի գործադրման միջոցով: Սահմանների անձեռնմխելիության սկզբունքի բովանդակությունը ներառում է պետությունների պարտավորությունը՝ հարգելու առկա սահմանագիծը տեղում և թույլ չտալու սահմանային գծի կամայական տեղաշարժը տեղում, սահմանագծի հատումը առանց համապատասխան թույլտվության կամ սահմանված կանոններից դուրս: Այն նաև ներառում է յուրաքանչյուր ինքնիշխան պետության իրավունքը՝ վերահսկելու իր սահմանների հատումը մարդկանց և տրանսպորտային միջոցների կողմից[38]:

Այսպիսով, ինչպես տարածքային ամբողջականության հարգման սկզբունքը, այնպես էլ սահմանների անձեռնմխելիության կամ անխախտելիության սկզբունքը որևէ կերպ պատասխան չեն տալիս և չեն էլ կարող տալ այն հարցին, թե որն է տվյալ

[36] Verdross, A./Simma, B., Universelles Völkerrecht, unveränd. Nachdruck der 3. Aufl., 2010, էջ 276:
[37] Stein, T./von Buttlar, Ch./Kotzur, M., Völkerrecht, 14., neu bearbeitete Auflage, 2016, էջ 199, կետ 537:
[38] Международное право: учебник/МГИМО(У) МИД РФ; Дипломат. акад. МИД РФ; отв. ред. Ю.М. Колосов, В.И. Кузнецов. – М. : Международные отношения, 1994, էջ 37-38:

ինքնիշխան պետության տարածքը, և ինչն է մտնում այդ տարածքի մեջ: Հետևաբար, Ալմա Աթայի հռչակագրից որևէ կերպ չի բխում, որ Հայաստանը ճանաչել է Արցախի պատկանելությունը Ադրբեջանի Հանրապետությանը:

2. Uti possidetis սկզբունքի կիրառություն Ալմա Աթայի հռչակագրո՞ւմ

Ուղղակիորեն կրկնելով միջազգային իրավունքի տեսանկյունից հիմնազուրկ ադրբեջանական թեզերը՝ Հայաստանի ներկայիս կառավարությունը 2022թ. հոկտեմբերի 6-ի հայտարարությունից[39] ի վեր պնդում է, որ Ալմա Աթայի հռչակագրի համաձայն՝ ԱՊՀ անդամ պետությունները, ճանաչելով միմյանց տարածքային ամբողջականությունը, դրանով ճանաչել են ԽՍՀՄ նախկին ադմինիստրատիվ սահմանները: Այսպես, ըստ Հայաստանի ԱԳՆ մամլո խոսնակի, «2022թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում Հայաստանը և Ադրբեջանը վերահաստատել են իրենց հավատարմությունը Ալմա Աթայի հռչակագրին, որը դեռևս 1991թ. ստորագրել են նախկին խորհրդային հանրապետությունները, այդ թվում՝ Հայաստանը, Ադրբեջանը և Ռուսաստանը՝ ճանաչելով միմյանց տարածքային ամբողջականությունը խորհրդային պետությունների նախկին ադմինիստրատիվ սահմաններով»[40]: Նմանօրինակ դիրքորոշում է արտահայտում նաև Ռուսաստանի Դաշնությունը: Ըստ ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի՝ Ալմա Աթայի հռչակագիրը սահմանում է, որ «միութենական հանրապետությունները կազմում են Անկախ պետությունների համագործակցությունը և հաստատում են սահմանների անձեռնմխելիությունը Խորհրդային Միության հանրապետությունների միջև եղած սահմաններում: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մտնում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ»[41]: Ավելի ուշ, Բաքվում կայացած մամուլի ասուլիսում, նա նույնիսկ պնդել է, որ Ալմա Աթայի հռչակագրում «գրված է, որ Խորհրդային Միության տարածքում ձևավորված նոր պետությունների պետական սահմանները որոշվելու են ԽՍՀՄ կազմում գոյություն ունեցող վարչական սահմաններով»[42]:

Ինչպես արդեն ակնհայտ է վերոշարադրյալից, ԱՊՀ ստեղծման որևէ փաստաթղթում ԽՍՀՄ ներքին վարչական սահմանների վերաբերյալ որևէ հիշատակում ընդհանրապես առկա չէ: Ուստի Հայաստանի և Ռուսաստանի նշված

---

[39] https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/07/Nikol-Pashinyan-Announcement/:
[40] https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/08/31/spox_comment/12172:
[41] https://www.mid.ru/ru/maps/ly/1841407/:
[42] https://www.youtube.com/watch?v=8J9WgNNSwHY:

դիրքորոշումները ինչ-որ առումով արտահայտում են միջազգային իրավունքի դոկտրինայում որոշակի տարածում ունեցող այն մոտեցումը, որ նորանկախ պետությունների միջև նախկինում եղած վարչական սահմանները *ավտոմատ կերպով* վերածվում են միջազգային-իրավական սահմանների (uti possidetis-ի սկզբունք)[43]: Այդ սկզբունքը, սակայն, միջազգային սովորութային իրավունքի նորմ չէ[44] և, բացի ապագաղութացման ենթատեքստից, կիրառելի չէ հատկապես նախկին ինքնիշխան պետության փլուզման կամ այդ պետությունից անջատման արդյունքում ձևավորված պետությունների միջև սահմանների նկատմամբ: Ինչպես իրավամբ պնդում է Սանտյագո Տորես Բերնարդեսը, «որպես միջազգային իրավունքի սկզբունք, uti possidetis juris կանոնը պարզապես չի վերաբերում տարածքի նկատմամբ տիտղոսին և սահմանների սահմանման հարցին իրավահաջորդության այնպիսի տեսակների պարագայում, ինչպիսիք են պետության տարածքի փոխանցումը, պետությունից անջատումը, պետության լուծարումը [և] պետությունների միավորումը»[45]:

Uti possidetis-ը գործում է միայն անկախություն ձեռք բերելու պահից, ոչ մինչ այդ: Նրա էությունն այն է, որ նորանկախ պետությունների միջև սահմանագիծը որոշվում է նախկին վարչական սահմաններով, եթե կողմերը այլ բան չեն սահմանում: Uti possidetis-ը վերաբերում է բացառապես այդ պետությունների միջև կոնկրետ

---

[43] Uti possidetis-ի մանրամասն լուսաբանումը սույն աշխատության շրջանակներից դուրս է: Այստեղ քննության առարկա է միայն uti possidetis-ի առնչությունը Ալմա Աթայի հռչակագրին: Uti possidetis-ի վերաբերյալ տե՛ս, մասնավորապես, Lalonde, Suzanne N., Determining Boundaries in a Conflicted World: The Role of Uti Possidetis. Montreal, Ithaca NY: McGill-Queen's University Press, 2002: Lalonde, Suzanne N., The acquisition of independence and international boundries, in The Routledge Handbook of Self-Determination and Secession, Edited by Ryan D. Griffiths, Aleksandar Pavković, Peter Radan, London and New York 2013, էջ 474-490: Santiago Torres Bernardez, The Uti Possidetis iuris Principle in Historical Perspective, in Lilly Sucharipa-Behrmann (Hrsg.), Völkerrecht zwischen normativem Anspruch und politischer Realität. Festschrift für Karl Zemanek zum 65. Geburtstag. Duncker & Humblot, Berlin 1994, էջ 414-437: Sarvarian, A., Uti Possidetis Iuris in the Twenty-first Century Consensual or Customary, in International Journal on Minority and Group Rights, 2015, Vol. 22, No. 4, Special Issue: Self-determination, Resources and Borders (2015), էջ 511-532: Геворгян Л., Вопрос унследования административных границ СССР в международном праве 2012, http://publications.ysu.am/wp-content/uploads/2014/02/410.pdf:

[44] Crawford, J., Brownlie's principles of public international law 9. ed., Oxford University Press, 2019, էջ 224: Lalonde, Determining Boundaries in a Conflicted World, էջ 217: Lalonde, The Acquisition, էջ 484-486: Մատնանշելով ՄԱԿ ԱՄԴ 1986թ. Մալի-Բուրկինա Ֆասո սահմանային վեճի գործով որոշումը՝ Պ. Ռադանը շեշտում է, որ այդ «որոշման ողջ էությունը վկայում է այն մասին, որ այդ սկզբունքը սահմանափակվում է ապագաղութացումով: Սկզբունքը, հակառակ Բադինտերի հանձնաժողովի, չի ճանաչվում որպես անկախության բոլոր դեպքերի համար կիրառելի ընդհանուր սկզբունք»: Radan, P., Post Secession International Borders: A Critical Analysis of the Opinions of the Badinter Arbitration Commission (2000), in Melbourne University Law Review, Vol. 24, 2000, էջ 62:

[45] Santiago Torres Bernárdez, ‘The “Uti Possidetis Juris Principle” in Historical Perspective’ in Konrad Ginther et al (eds), Völkerrecht zwischen normativem Anspruch und politischer Realität: Festschrift für Karl Zemanek zum 65. Geburtstag (1994), էջ 434:

սահմանագծի որոշմանը (սահմանային գծերի ճշգրիտ տեղակայմանը), բայց ոչ այն հարցին, թե որոնք են նորանկախ պետությունների տարածքները: Այդ տարածքները կարող են քիչ թե շատ համընկնել նախորդ պետության ներքին վարչական բաժանման տարածքներին, բայց կարող են նաև էականորեն տարբերվել՝ կախված անկախության հասնելու եղանակներից և հանգամանքներից. այս կամ այն միավորը կարող է անկախություն ձեռք բերել ինչպես նախկին վարչական բաժանման տարածքում, այնպես էլ դրանցից դուրս: Ուստի, օրինակ, պետության փլուզման պահին եղած վարչական սահմանները չափանիշ կարող են լինել միայն նորանկախ պետությունների համար միայն այն ժամանակ, երբ նորանկախ պետությունների տարածքները համընկնում են:

Uti possidetis-ը չի անդրադառնում այն հարցին, թե անկախություն ձեռք բերած սուբյեկտները ինչ տարածքով են հավակնում դառնալ անկախ պետություն: Դա նախորդ պետության ինչպես ներքին իրավունքի, այնպես էլ ռեալ գործընթացների արդյունք է: Ապագաղութացման ենթատեքստում այս սկզբունքի իմաստը լիովին պարզ էր. սկզբում որոշվում էր այն տարածքային միավորը, որը պետք է անկախություն ձեռք բերեր, և հետո միայն իրականացվում էր անկախության ստացած պետության սահմանների սահմանազատումը: Ուստի Uti possidetis-ը սահմանների սահմանազատման սկզբունք է, բայց ոչ երբեք տարածքի որոշման, տարածքի նկատմամբ տիտղոսի:

Փորձելով առաջ մղել իր թեզը, որ uti possidetis-ը իբր միջազգային սովորութային իրավունքի նորմ է, Մ. Շոուն, որպես պետությունների ընդհանուր պրակտիկայի օրինակ[46]՝ նշում է նաև ԽՍՀՄ փլուզումը: Նա, հղելով Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի 5-րդ հոդվածին և Ալմա Աթայի հռչակագրին, պնդում է, որ «թեև այս փաստաթղթերը հիմնականում վերաբերում են տարածքային ամբողջականության սկզբունքին, որը պաշտպանում է միջազգային սահմանները, պարզ է, որ նպատակը եղել է հաստատել և ամրապնդել uti possidetis դոկտրինան, հատկապես նոր սահմանների համար

[46] Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԱՄԴ Կանոնադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի համաձայն՝ միջազգային-իրավական սովորույթի էությունն այն է, որ այն պետք է լինի «ընդհանուր պրակտիկայի ապացույց, որն ընդունված է որպես իրավունքի նորմ»: Այսինքն, որպեսզի որևէ միջազգային իրավական նորմ դիտվի որպես սովորութային նորմ, անհրաժեշտ է, որպեսզի այն բավարարի երկու պահանջի, այն է՝ ունենա մշտական, լայնածավալ և միատեսակ կիրառություն և զուգորդվի opinio juris sive necessitatis-ի հետ (համոզմունք, որ նման կիրառությունը իրավաբանորեն պարտադիր է):

միջազգային, տարածաշրջանային և ազգային լեգիտիմացում ապահովելու նպատակով: Դա պայմանավորված է նրանով, որ պաշտպանության ենթակա սահմանները, որոնք նոր էին ձևավորվել որպես միջազգային սահմաններ, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների սահմաններն էին և ուրիշ ոչինչ»[47]:

Թեև չի կարելի ժխտել, որ Խորհրդային Միության իրավահաջորդ պետությունների միջազգային սահմանները, ի վերջո, հիմնականում համընկնում են նախկին ԽՍՀՄ ներքին սահմաններին, սակայն նման արդյունքն ինքնին բավարար չէ Խորհրդային Միության լուծարումը դիտարկելու որպես միջազգային-իրավական նախադեպ: Մինսկի համաձայնագիրը, Ալմա Աթայի հռչակագիրը և ԱՊՀ Կանոնադրությունը ոչ միայն չեն հիշատակում uti possidetis juris սկզբունքը, այլև ավելի կարևոր է այն հանգամանքը, թե անհնարին է պնդել, որ նախկին խորհրդային հանրապետությունները իրենց սահմանների խնդիրը լուծել են ելնելով այն բանից, որ նրանք *իրավաբանորեն պարտավոր են ճանաչել միմյանց վարչական սահմանները*: Սահմանների հարցի շուրջ քննարկումները ԱՊՀ ստեղծման փուլում ցույց են տալիս, որ ներգրավված կողմերի մեծամասնության համար միայն հանրապետությունների միջև համաձայնությունն է հիմք հանդիսացել նախկին ԽՍՀՄ տարածքում գոյություն ունեցող սահմանների ճանաչման համար: Վճռորոշ է եղել ոչ թե ինչոր նախորոք գոյություն ունեցող միջազգային-իրավական կանոն, այլ նորանակախ պետությունների միջև ձեռք բերված *համաձայնությունը*:

Այն, որ uti possidetis-ի սկզբունքը չէր կարող դրված լինել ԱՊՀ ստեղծման համաձայնագրերի և Ալմա Աթայի հռչակագրի հիմքում, ակնհայտ է նաև այն պատճառով, որ ԱՊՀ անդամ պետությունները միմյանց միջև գոյություն ունեցող սահմանները ճանաչել են միայն 1993թ. հունվարի 22-ին ընդունված ԱՊՀ Կանոնադրությամբ, որն ուժի մեջ է մտել 1994թ. մարտի 16-ին: Կանոնադրության 3-րդ հոդվածը շարադրում է միջազգային իրավունքի և Հելսինկիի Եզրափակիչ ակտի հանրաճանաչ սկզբունքները, որոնցով պարտավորվում են առաջնորդվել ԱՊՀ անդամ պետությունները իրենց միջև հարաբերություններում, ներառյալ ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքը և տարածքային ամբողջականության սկզբունքը: Այս սկզբունքներից զատ, որոնք արդեն իսկ առկա էին ԱՊՀ հիմնադիր փաստաթղթերում, ԱՊՀ Կանոնադրությունը ԱՊՀ ստեղծման

[47] A/63/664–S/2008/823, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N08/670/89/PDF/N0867089.pdf?OpenElement, էջ 27, կետ 92: Ադրբեջանի անունից ներկայացված այս փաստաթղթի հեղինակը Մ. Շոուն է, ինչպես Ադրբեջանը բացահայտեց A/74/881–S/2020/503 նորացված զեկույցի կից նամակում, https://digitallibrary.un.org/record/3885765:

պահից առաջին անգամ ամրագրեց «գոյություն ունեցող սահմանների ճանաչման» դրույթը: Մինչ ԱՊՀ Կանոնադրության ընդունումը և վավերացումը ԱՊՀ հիմնադիր փաստաթղթերը, պարզապես վկայակոչելով միջազգային իրավական այնպիսի հիմնարար սկզբունքները, ինչպիսիք են, մասնավորապես, տարածքային ամբողջականությունը և ուժի չկիրառումը, չէին տալիս այն հարցի պատասխանը, թե որոնք են այդ պետությունների միջև կոնկրետ սահմանները: Ուստի, տարածքային ամբողջականության հարգման և ուժի չկիրառման պահանջներով կաշկանդված ԱՊՀ պետությունները կարող էին ունենալ միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ, քանի դեռ նրանք համաձայնության չէին եկել այդ սահմանների տեղադրման վերաբերյալ: ԱՊՀ Կանոնադրությամբ ԱՊՀ պետությունների միջև գոյություն ունեցող սահմանների ճանաչումը վերաբերում էր այդ պետությունների միջև ապագա հարաբերություններին, և չէր կարող հետադարձ կերպով հաստատել uti possidetis-ի առկայությունը:

III. 1992Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐԸ ԱՊՀ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՊՀ ստեղծման 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագիրը Հայաստանը 1992թ. փետրվարի 18-ին վավերացրել է վերապահումներով, ընդ որում վերապահումներ կատարելու մտադրության վերաբերյալ Հայաստանը պաշտոնապես հայտարարել է դեռևս 1991թ. դեկտեմբերի 26-ին, երբ ՀՀ Գերագույն խորհուրդը վավերացրեց 1991թ. դեկտեմբերի 21-ի ԱՊՀ ստեղծման համաձայնագրի արձանագրությունը: Վավերացումների և 1992թ. փետրվարի 18-ի Հայաստանի վերապահումների իրավական բնույթը հասկանալու համար առանցքային նշանակություն ունի 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի արձանագրության 3–րդ պարբերությունը. «Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի հիման վրա և դրա վավերացման ժամանակ կատարված վերապահումները հաշվի առնելով՝ կմշակվեն Համագործակցության շրջանակներում համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթեր»: Դրանով Ալմա Աթայի արձանագրությունը սահմանել է վերապահման յուրօրինակ տարատեսակ. յուրաքանչյուր պետություն ազատ է 1991թ. դեկտեմբերի 8-ի համաձայնագրի վերաբերյալ կատարելու վերապահումներ, որոնք հետագայում բանակցությունների ընթացքում պետք է քննարկվեն ու համաձայնության դեպքում հաշվի առնվեն ԱՊՀ համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերում:

Ինչպես արդեն նշվել է, 1991թ. դեկտեմբերի 21-ի փաստաթղթերի ստորագրումից հետո մի քանի օր անց՝ 1991թ. դեկտեմբերի 26-ին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը վավերացրեց 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի արձանագրությունը, որով վերջակետ էր դրվում ԽՍՀՄ կազմում Հայաստանի գոյությանը: Այդ նույն օրը պաշտոնապես դադարեց գոյություն ունենալ նաև ԽՍՀՄ-ը: Վավերացնելով Ալմա Աթայի արձանագրությունը՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը վավերացման վերաբերյալ որոշման երկրորդ կետով հանձնարարեց «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի, անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի մշտական և Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովներին՝ մշակել և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հաստատմանը ներկայացնել Անկախ պետությունների ընկերակցության ստեղծման համաձայնագրի վերապահումների վերաբերյալ առաջարկություններ»:

1991թ. դեկտեմբերին, օգտվելով այն հանգամանքից, որ Լեռնային Ղարաբաղի տարածքից դուրս էին բերվում նախկին Խորհրդային Միության բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները, Ադրբեջանն սկսեց ուղղակի ռազմական գործողություններ իրականացնել Արցախի բնակչության դեմ: Լեռնային Ղարաբաղում իրավիճակի կտրուկ սրման հետ կապված՝ Հայաստանի խորհրդարանը 1991թ. դեկտեմբերի 25-ին որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության անվտանգության և կենսագործունեության ապահովման միջոցառումների վերաբերյալ քննարկումը որպես հրատապ հարց մտցնել Գերագույն խորհրդի դեկտեմբերի 26-ի նիստի օրակարգ[48]: 1991թ. դեկտեմբերի 26-ի հայտարարության մեջ արձանագրվում էր, որ «անընդհատ ռմբակոծվում են հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը, սահմանամերձ գյուղերն ու ավանները: Սպանությունները հանրապետության տարածքում դարձել են ամենօրյա երևույթ»[49]: Գնահատելով ստեղծված վիճակը «պայթունավտանգ, իսկ հետևանքները՝ անկանխատեսելի», Հայաստանի խորհրդարանը կոչ էր անում ԱՊՀ անդամ պետությունների խորհրդարաններին և նախագահներին «գործուն միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգությունն ու կենսագործունեությունն ապահովելու համար»[50]: Բնական է, որ

[48] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1991, հ. 24 (1004), 31.12.1991, հ. 571, էջ 36:
[49] Նույն տեղում, հ. 572, էջ 36:
[50] Նույն տեղում, էջ 37

նման հայտարարությունն առնվազն վկայում է այն մասին, որ Ալմա Աթայի արձանագրության վավերացման օրը Հայաստանի խորհրդարանը որևէ մտադրություն չի ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դիտարկելու որպես Ադրբեջանի մաս: Ավելին, 1992թ. հունվարի 3-ին, Արցախի առաջին խորհրդարանի ընտրությունների ավարտից անմիջապես հետո, Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց ԼՂՀ Գերագույն խորհրդին ուղղված դիմում, որտեղ «ողջ հայ ժողովրդի անունից» հավաստիացրեց ԼՂՀ Գերագույն խորհրդին, որ «բոլոր միջոցներով զորավիգ կլինի *Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը*»[51] (ընդգծ. հեղին.):

Հայաստանի խորհրդարանի կողմից ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը վավերացնելու նախօրյակին՝ 1992թ. փետրվարի 17-ին, Գերագույն խորհուրդն ընդունեց դիմում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրներին, ԱՊՀ անդամ երկրներին, ԵԱՀԽ-ին և Եվրախորհրդարանին, որտեղ արձանագրվում էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը «սկսել է իր դաժանությամբ աննախադեպ տոտալ պատերազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ»[52]:

1992թ. փետրվարի 18-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը վավերացնելու վերաբերյալ որոշում, որը պարունակում էր 10 վերապահում[53]: Այդ վերապահումների մեջ Արցախին վերաբերելի կարևորագույն դրույթը որոշման 10-րդ կետն է, ըստ որի. «Սույն Համաձայնագիրը բաց է նախկին ԽՍՀ Միության բոլոր անդամ պետությունների, այդ թվում ԽՍՀՄ-ի նախկին ինքնավար կազմավորումների համար, որոնք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին» հռչակագրի ընդունումից առաջ անցկացրել են անկախություն հռչակելու վերաբերյալ համաժողովրդական հանրաքվե, և դրա հիման վրա ինքնավար կազմավորման իշխանության բարձրագույն

[51] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1992, հ. 1-2 (1005-1006), հունվար, 1992, հ. 5, էջ 16-17:
[52] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1992, հ. 4 (1008), 29.02.1992, հ. 52, էջ 6-7:
[53] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1992, հ. 4 (1008), 29.02.1992, հ. 60, էջ 10-12: 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելոռուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության (ՌԽՖՍՀ) և Ուկրաինայի կողմից ստորագրված Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի վավերացման մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3232&fbclid=IwAR12WOfQu_FNXRT4VAFjX92jwUM8EmQI49PhFkCtUV9cMZzwGMXpaE9eKaI:

գործադիր մարմինը դիմել է Անկախ պետությունների համագործակցություն՝ նրա կազմի մեջ ընդունվելու խնդրանքով, ինչպես նաև՝ սույն Համաձայնագրի նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների միանալու համար»: Ակնհայտ է, որ վերապահումը ուղղակիորեն նկատի ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, որը բավարարում է վերապահման երկու նախապայմաններին՝ անկախության հանրաքվեի անցկացում և ԱՊՀ անդամակցության դիմում: ԱՊՀ անդամակցության դիմումը ԼՂՀ Ժողովրդական պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Լ. Պետրոսյանը ներկայացրել է անկախության հանրաքվեի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո՝ 1991թ. դեկտեմբերի 12-ին[54]: ԱՊՀ ստեղծման համաձայնագրի վավերացման այս վերապահումը ուղղակիորեն արտահայտում է Հայաստանի պաշտոնական դիրքորոշումն առ այն, որ ԼՂՀ-ն անկախ պետություն է և, հետևաբար, Ադրբեջանի տարածք չէ:

Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ 1992թ. սանձազերծված լայնածավալ ագրեսիայի պայմաններում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1992թ. հուլիսի 8-ին կայացրեց ևս մեկ և առավել քան հստակ քայլ՝ ԼՂՀ փաստացի ճանաչման ուղղությամբ: Հայաստանի Գերագույն խորհուրդը, «հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա», «նշելով, որ կպաշտպանի Արցախի հարցի այն լուծումը, որը կընդունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, անընդունելի համարելով մի շարք միջազգային փաստաթղթերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես Ադրբեջանի մաս ամրագրելու փորձերը», որոշեց «հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը» և «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»[55]:

Ինչպես արդեն նշվել է վերևում, Ադրբեջանը 1993թ. սեպտեմբերին անդամակցեց ԱՊՀ-ին և վավերացրեց ԱՊՀ Կանոնադրությունը: ԱՊՀ անդամ պետությունների միջև գոյություն ունեցող սահմանների ճանաչման վերաբերյալ

[54] Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», Ереван, 1995, էջ 89-90:
[55] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1992, հ. 13 (1017), 15.07.1992, հ. 313, էջ 3-4:

դրույթն ամրագրելու ժամանակ, ինչպես արդեն նշվել է, Ադրբեջանը ԱՊՀ անդամ պետություն չէր և նրա վրա այն չէր տարածվում: ԱՊՀ-ին Ադրբեջանի անդամակցության և ԱՊՀ Կանոնադրության վավերացումից հետո, երբ 1994թ. ապրիլի 15-ին ԱՊՀ պետությունների ղեկավարները ստորագրեցին «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանման մասին հայտարարությանը», Հայաստանի նախագահը հրաժարվեց այն ստորագրելուց[56], քանի որ այն Ադրբեջանի կողմից անխուսափելիորեն օգտագործվելու էր իր քարոզչական նպատակների համար:

1995թ. Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական մակարդակով հաստատագրեց Հայաստանի Հանրապետության հանձնառությունը Արցախի նկատմամբ: Սահմանադրության նախաբանում որպես հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված համազգային նպատակները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արցախի ինքնորոշումը, Հայաստանի Հանրապետությունը հանձնառություն ստանձնեց կյանքի կոչել «հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտումը»[57]:

Այսպիսով, ինչպես մինչև 1992թ. փետրվարի 18-ին կատարած վերապահումը, այնպես էլ դրանից հետո Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Արցախի պատկանելության վերաբերյալ կայացել է նրանում, որ գոյություն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որն անկախ է և, հետևաբար, Ադրբեջանի մաս չի կազմում: Այդ դիրքորոշումը, որը 1995 թվականից սկսած՝ ունի սահմանադրական ամրագրում, Հայաստանի Հանրապետության իշխանությունները պահպանել են մինչև 2022 թվականը:

[56] Декларация о соблюдении суверенитета, территориальной целостности и неприкосновенности границ государств-участников Содружества Независимых Государств (Москва, 15 апреля 1994 г.) // Действующее международное право. М., 1999. - Т. 1. - С. 196-197: Բալայան, Տ. Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ. Երևան 2004, էջ 123:

[57] Մանրամասն, տե՛ս Պողոսյան Վ., Արցախի ինքնորոշման իրավունքից հրաժարումը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, https://168.am/2022/04/18/1685778.html:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*